

Աշխատանքային թերթիկ

Որքա՞ն արագ է ջուրը եռում

Անուն-ազգանուն _____

Ամիս-ամսաթիվ _____

Այս աշխատանքում դու կհամեմատես ջրի ջերմաստիճանները, կլրացնես գծային գրաֆիկ և կգտնես օրինաչափություններ:


Ուսուցչուհի Անահիտը եռացրեց ջուրը և չափեց դրա ջերմաստիճանը: Դասարանը գրանցեց հետևյալ արդյունքները:

Ժամանակ, րոպե	2	4	6	8	10	12	14
Ջերմաստիճան, °C	30	45	60	75	90	100	100

Ուսուցիչ Պետրոսը նույն փորձն իրականացրեց իր դասարանում: Ահա արդյունքները.

Ժամանակ, րոպե	2	4	6	8	10	12	14
Ջերմաստիճան, °C	40	60	80	100	100	100	100

Երկու դասարաններն էլ գծեցին իրենց արդյունքների գրաֆիկները:





1 Լրացրու գծային գրաֆիկները:

2 ա Գծային գրաֆիկները նո՞ւյնն են: _____

բ Ի՞նչ տարբերություն ես նկատում երկու գրաֆիկների միջև:

գ Բացատրիր այդ տարբերության պատճառը:

2 ա Ո՞րն է ջրի եռման կետը: _____

բ Այս երկու գրաֆիկներն ապացուցո՞ւմ են դա: _____

գ Ինչպե՞ս կարող ես պարզել, արդյո՞ք ջուրը մի՞շտ է եռում այս ջերմաստիճանում:

3 Ուրիշ ինչպե՞ս կարող էիր իմանալ, որ ջուրը եռում է, եթե չսպիեիր ջրի ջերմաստիճանը: Առաջարկիր երկու եղանակ:
